

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռս ուրախությունն ունի ծանուցելու, որ լույս է ընծայել հայ եկեղեցական արվեստին նվիրված իր երկրորդ հրատարակությունը՝ «Հայկական խաչքարեր» ալբոմը, որը պարունակում է հարյուր գունավոր և հարյուր տասնհինգ սև-սպիտակ լուսանկարներ արդի Հայաստանի հողամասի վրա գտնվող խաչքարերի ընտիր նմուշների, ինչպես և մի քանի խաչքարերի լուսանկարներ Արևմտյան Հայաստանի շրջաններից:

Ալբոմի տեքստի հեղինակն է հայրենի ծանոթ արվեստաբան Լևոն Ազարանը: Տեքստը տպագրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Սույն գործի մակետը և գեղարվեստական խմբագրումը կատարել է Հայաստանի ժողովրդական նկարիչ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գրիգոր Խանջյանը, իսկ տեքստի խմբագրումը՝ ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը՝ նախագահը Հայաստանի ճարտարապետների միության: Ալբոմի բոլոր լուսանկարները պատրաստել է բեյրութաբնակ արվեստագետ-լուսանկարիչ Մանուկ Ալեմյանը:

Մայր Աթոռիս պատվերով «Հայկական խաչքարեր» ալբոմը տպագրել է «Էրեբունի» հրատարակչությունը ի Բեյրութ, գեղարվեստական և տեխնիկական բարձր մակարդակով:

Սույն ալբոմի հրատարակության գործին նյութապես օժանդակել է նաև «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը ի Լիսաբոն, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Մայր Աթոռս հայտնում է նաև իր ջերմագին գնահատանքը վերոհիշյալ հայ արվեստագետներին և «Էրեբունի» հրատարակչությանը:

«Հայկական եկեղեցիներ»-ի և «Հայկական խաչքարեր»-ի հրատարակումից հետո Մայր Աթոռս ծրագրել է լույս ընծայել երրորդ մի ալբոմ ևս՝ նվիրված սուրբ Էջմիածնում պահվող հայ եկեղեցական արվեստի տարբեր տեսակի գործերին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

12-ը հունիսի 1974 թ.,
Ս. Էջմիածին